# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՐԱՏԱՊ ԲԱՑ  ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում 2023թ-ի մայիսի 4-ին կնքված ՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3 ծածկագրով գնման պայմանագրում 2026թ-ի մայիսի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրով նախատեսված  ծառայությունների մատուցման ժամկետը 30 օրացուցային օրով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգելու նպատակով 08.05.2026թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում:  ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 844-704:

Էլ. փոստ՝ gurgen_ghazaryan@taxcervice.am:

Պատվիրատու՝  **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

## Համաձայնագիր-5
## 04.05.2023թ. կնքված N ՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** « 03 » Նոյեմբեր 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Դ.Մաթևոսյանի մի կողմից, և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 04.05.2023թ. կնքված N ՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ և 7.6-րդ կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը հետագա համագործակցության նպատակով որոշեցին՝**

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մաթևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Հ.Հակոբյան-3
«Ամերիա բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 00228737
«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝

Տ.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ